## Մզ.

Ընդ աւուրս այսոսիկ սառաֆոզլու Սարգիս վարդապետն թոյլտուութեամբ պատրիարգին եկն աստ ի տուն իւր իբրև ի ծածուկ առ ի հոգալ զպէտս ինչ իւր. և հանդերձեալ է գնալ յեւդոկիայ լինիլ առաջնորդ քաղաքին։ (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1759 Օգոստ. 19. ի Կոստանդնուպոլիս)։

## Մէ.

Վասն ահագին սահակ վարդապետին լսեմք, թէ գալոց է ի Կոստանդինուպոլիս հրաժարեալ ի կաթուղիկոսութենէ. և ասէ Սարգիս վարդապետն [Սառաֆեան], թէ չարիք մեծամեծք եկեսցեն ի վերայ ազգիս ի գալ նորա աստ, քանզի բարկութեամբ գայ, և ոչ ունի ինչ երկիւղ յումէք։ Մանաւանդ յարուսցէ զկռիւ ի վերայ պատրիարգին, և բազում դրամք խաղասցեն ի դուռն տաճկին։ Եւ նա ինքն Սարգիս վարդապետն հիւանդագին կայ ի մահճի յետ դեղին ցաւոյն ըմբռնեալ ի Ջերմանէ. և քանի մի աւուրք են, զի ոչ կարացի երթալ տեսանել զնա։ (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1759 Նոյեմ. 19. ի Կոստանդինուպոլիս)։

## Մը.

Կարծեմ մինչև ցարդ լուեալ ես զյաղթութիւն տաւունին ընդ պրուշին. զի պրուշն խորհեցաւ նենգել տաւունին և կործանել զնա, և ինքն նենգեցաւ. զի ծանուցեալ տաւունին զխորհուրդս նորա, աճապարեաց և զխումբ մի քսան հազարաց նորա ի մէջ առեալ, յետ կոտորելոյ իբր վեց հազար մի ի նոցանէ, զչորեքտասան հազարն կենդանւոյն անձնատուր գերի կալաւ ամենայն զինուք զարդուք, կահիւք և կարասեօք նոցա. և այս ի մեծագոյն ուրախութիւն օգոստականաց, և ի միջաբեկութիւն փրուսեանց։ (Մելգոնեան Աբբ. առ Հ. Մկրտիչ, 1759 դեկտ. 8. [Ս. Ղազար])։

## Մթ.

Դեռ նստի [Սարգիս վ. Սառաֆեան] ի տան քեռ իւրոյ, և ոչ խառնի յինչ յեկեղեցւոջն հայոց, և երթայ անդր երբեմն իբրև անցաւոր և օտար. ոչ պատարագէ և ոչ քարոզէ. և կարծեմ թէ զայս ձմեռն աստ ձմերէ մինչև տեսցէ, թէ զինչ լինիցի յազգիս և ի քաղաքիս։ Ո՛չ կարէ ասել, թէ ոչ երթամ յեւդոկիայ, զի այնու պայմանաւ եկն աստ, ապա թէ ոչ լինի ընդդէմ արքունի հրամանի։ Եւ ոչ կամի յօժար սրտիւ երթալ վասն խղճի մտաց. վասն այսորիկ յերկարէ օր քան զօր զգնալ իւր։ Ասէ, եթէ միաբանեալ ոմանք յուղղափառաց տային ինձ գաղտ իբր 2000 դրամ յապրուստ, այսօր յարուցեալ չուէի աստի ի Վէնէտիկ։ (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1759 դեկտ. 15. ի Կոստանդինուպոլիս)։

## Մժ.

Գուցէ լուեալ է ձեր այդր թադարաց եօթն հազարաց, որ կամելով փոխել զխանն թադարաց մերոյ գաւառին, բռնացեալ բազում ինաստ հասուցին բազմաց քաղաքաց, մանաւանդ յերկրէն պուլտանաց գերեցին անհամար գերիս յիշխանաց և ի սոսկականաց, մինչև կամեցան ասպատակ նոցա անցանել ի Լէհաստան, և անտի ևս կողոպտել. և բազումք յիշխանաց և ի պարոնաց մինչև ի եաշ քաղաքէն փախստական եղեալ մազապուր ի Լէհաստան մտեալ ի բերդորայս ամրանային և երկիրն սկիզբն արար թանկութեան։ Եւ մեր տեսեալ զայս ամենայն, զի չէր հնար ուրեք ամ-